



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2003թ. առաջին եռամսյակում /վերլուծություն/

2003թ. առաջին եռամսյակում, հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 12942 գործարքներ, որոնք 2002թ. առաջին եռամսյակի համեմատ աճել են 20.2%-ով, իսկ 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 36.5%-ով: 2003թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2003թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. առաջին եռամսյակում, անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. առաջին եռամսյակում, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6243 օտարման գործարքների 90.6%-ը կազմել են առուվաճառքները, 8.9%-ը նվիրատվությունները և 0.6%-ը փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման

գործարքների 43.7%-ը արձանագրվել է Երևան քաղաքում և 47.2%-ը՝ քաղաքնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2003թ. առաջին եռամսյակում, 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 29.3%-ով, իսկ 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 26.9%-ով: 2003թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 2476 առուվաճառքի գործարքների 65.7%-ը արձանագրվել են քաղաքնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևանում, 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ, քաղաքնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 38.0%-ով, իսկ 2002թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 9.1%-ով:

2003թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում վաճառված քաղաքնակարան բնակելի շենքերի բնակարանների վաճառքի և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները՝

Համայնքներ	Քաղաքնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ. առաջին եռամսյակ /ԱՄՆ դոլար/	Քաղաքնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլարով/		
		առաջին եռամսյակ 2003թ.	չորրորդ եռամսյակ 2002թ.	առաջին եռամսյակ 2002թ.
Կենտրոն	200.0-970.0	356.0	320.3	252.3
Արաբկիր	150.0-550.0	247.0	207.7	153.0
Քանաքեռ-Զեյթուն	100.0-330.0	141.4	131.7	93.0
Նոր-Նորք	90.0-240.0	122.5	110.7	87.7
Ավան	90.0-190.0	112.3	95.3	81.7
Էրեբունի	80.0-300.0	127.4	118.7	85.0
Շենգավիթ	80.0-250.0	124.7	114.7	86.0
Դավթաշեն	100.0-250.0	137.0	120.7	86.3
Աջափնյակ	80.0-220.0	121.7	113.0	81.3
Մալաթիա-Սեբաստիա	90.0-240.0	122.4	104.5	85.7
Նուբարաշեն	40.0-100.0	55.5	55.7	37.7
Երևան	40.0-970.0	151.6	135.7	102.7

Կենտրոն համայնքի տվյալներում հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

2003թ. առաջին եռամսյակում Երևանում քաղաքնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գները, 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ, աճել են 11.7%-ով, իսկ 2002թ. առաջին եռամսյակի համեմատ 47.6%-ով: Վերլուծության արդյունքում կարելի է կանխատեսել, որ Երևանում քաղաքնակարան բնակելի տների բնակարանների շուկայական գների աճման միտումը դեռևս կպահպանվի:

2003թ. առաջին եռամսյակում հանրապետության մարզերում գրանցված քաղաքնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի

գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

2003թ. առաջին եռամսյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 988 բնակարաններ, որոնց քանակը 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 24.5%-ով, իսկ 2002թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 19.0%-ով:

2003թ. առաջին եռամսյակում ըստ հանրապետության մարզերի քաղաքների, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները՝

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ.առաջին եռամսյակ /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			առաջին եռամսյակ 2003թ.	չորրորդ եռամսյակ 2002թ.	առաջին եռամսյակ 2002թ.
Արագածոտն	Աշտարակ	22.0-93.0	60.8	60.0	55.2
	Այաբան	18.0-38.0	26.8	25.7	25.1
	Թալին	18.0-38.0	23.5	22.5	19.5
Արարատ	Արտաշատ	22.0-85.0	52.6	51.8	50.3
	Մասիս	20.0-85.0	53.5	53.3	47.6
	Վեդի	20.0-45.0	30.0	29.1	27.3
	Արարատ	22.0-40.0	31.0	29.6	25.2
Արմավիր	Վաղարշապատ	35.0-102.0	76.5	74.8	70.1
	Արմավիր	21.0-57.0	42.7	40.9	38.7
	Մեծամոր	17.0-48.0	30.4	30.0	27.9
Գեղարքունիք	Սևան	20.0-50.0	30.2	30.1	28.9
	Գավառ	20.0-45.0	29.2	28.6	28.0
	Մարտունի	18.0-34.0	28.5	28.1	27.0
	Վարդենիս	10.0-21.0	16.8	16.8	15.7
Լոռի	Վանաձոր	30.0-85.0	59.5	59.3	55.3
	Ստեփանավան	20.0-45.0	30.0	29.1	27.3
	Մայիսակ	17.0-30.0	23.1	22.7	20.8
	Այավերդի	15.0-40.0	24.7	24.3	21.3
	Տաշիր	15.0-25.0	18.5	18.1	17.0
Կոտայք	Աբովյան	40.0-100.0	78.0	77.7	75.1
	Նոր Հաճն	35.0-70.0	50.4	49.9	48.8
	Բյուրեղավան	15.0-45.0	34.5	34.1	31.1
	Եղվարդ	28.0-55.0	39.2	38.7	34.6
	Հրազդան	18.0-42.0	29.4	29.0	26.3
	Ծաղկաձոր	22.0-95.0	73.9	73.3	73.3
	Չարենցավան	13.0-55.0	30.0	29.9	25.7
Շիրակ	Գյումրի	30.0-97.0	63.3	62.7	57.3
	Արթիկ	17.0-35.0	24.5	24.2	21.8
	Մարալիկ	15.0-33.0	22.8	22.7	22.7
Սյունիք	Գորիս	21.0-35.0	28.3	27.6	24.9
	Կապան	18.0-52.0	27.8	27.5	24.2
	Միսիան	17.0-37.0	26.9	26.8	22.0
	Քաջարան	13.0-29.0	17.1	17.0	13.2

Վայոց Ձոր	Վայք	15.0-48.0	34.2	33.7	29.7
	Եղեգնաձոր	20.0-58.0	46.3	44.9	42.1
	Ջերմուկ	18.0-55.0	39.0	37.8	35.7
Տավուշ	Դիլիջան	15.0-54.0	35.7	35.6	30.3
	Իջևան	23.0-50.0	39.7	39.3	37.3
	Բերդ	15.0-43.0	28.0	27.1	25.0

2003թ. առաջին եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գները, 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ, աճել են 1.6%-ով, իսկ 2002թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 9.6%-ով:

2003թ. առաջին եռամսյակում, մարզերում արձանագրվել են անհատական բնակելի տների 907 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 233, մյուս մարզերում միասին վերցրած՝ 674: 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 40.6%-ով, այդ թվում, Երևան քաղաքում՝ 31.0%-ով, իսկ մյուս մարզերում, միասին վերցրած՝ 44.3%-ով, իսկ 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ առանձնատների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է՝ 20.2%-ով, ընդ որում Երևանում՝ 21.5%-ով, մյուս մարզերում միասին վերցրած՝ 19.8%-ով: Ընդ որում 2003թ. առաջին եռամսյակում հանրապետության մարզերում գրանցված առանձնատների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

Երևան քաղաքի համայնքներում 2003թ. առաջին եռամսյակում անհատական բնակելի տների վաճառքի և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները՝

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003 թ. առաջին եռամսյակում /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		առաջին եռամսյակ 2003թ.	չորրորդ եռամսյակ 2002թ.	առաջին եռամսյակ 2002թ.
Կենտրոն	200.0-990.0	358.3	324.3	256.3
Արաբկիր	160.0-580.0	249.7	210.7	156.0
Քանաքեռ-Զեյթուն	110.0-360.0	143.3	133.7	95.0
Նորք-Մարաշ	180.0-640.0	279.7	255.5	206.7
Ավան	95.0-200.0	114.0	96.3	82.7
Էրեբունի	95.0-320.0	129.0	119.7	86.0
Շենգավիթ	85.0-260.0	126.3	115.7	87.0
Դավթաշեն	100.0-260.0	138.3	121.7	87.3
Աջափնյակ	85.0-230.0	123.0	114.0	82.3
Մալաթիա-Սեբաստիա	95.0-250.0	124.3	105.5	86.7
Նուբարաշեն	45.0-110.0	56.3	56.7	38.7
Միջինը Երևանում	45.0-990.0	167.5	150.3	115.0

Կենտրոն համայնքի տվյալներում հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. առաջին եռամսյակում, առանձնատների 1քմ շինության շուկայական միջին գները, 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել են 11.4%-ով, իսկ 2002թ. առաջին եռամսյակի համեմատ 45.7%-ով

Վերլուծության արդյունքում կարելի է կանխատեսել, որ Երևանում անհատական բնակելի տների շուկայական գների աճման միտումը դեռևս կպահպանվի:

Մյուս մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. առաջին եռամսյակ /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			առաջին եռամսյակ 2003թ.	չորրորդ եռամսյակ 2002թ.	առաջին եռամսյակ 2002թ.
Արագածոտն	Աշտարակ	35.0-100.0	80.2	79.2	72.3
	Ապարան	20.0-45.0	36.9	36.1	33.2
	Թալին	15.0-35.0	27.0	26.5	21.7
Արարատ	Արտաշատ	28.0-80.0	60.5	60.0	55.2
	Մասիս	27.0-80.0	60.5	59.7	59.4
	Վեդի	25.0-60.0	35.0	34.4	33.4
	Արարատ	25.0-60.0	34.7	33.3	32.5
Արմավիր	Վաղարշապատ	50.0-110.0	78.2	76.3	75.8
	Արմավիր	35.0-90.0	49.2	47.6	45.2
Գեղարքունիք	Սևան	25.0-60.0	35.5	35.1	32.5
	Գավառ	25.0-65.0	38.4	37.7	35.8
	Մարտունի	20.0-55.0	32.9	32.5	30.3
	Վարդենիս	15.0-45.0	19.9	19.3	18.2
Լոռի	Վանաձոր	35.0-90.0	66.4	66.1	63.1
	Ստեփանավան	20.0-50.0	31.9	31.4	30.9
	Սյիտակ	17.0-50.0	23.9	23.3	20.9
	Ալավերդի	18.0-50.0	25.8	25.4	23.3
	Տաշիր	15.0-30.0	19.0	18.7	17.9
Կոտայք	Աբովյան	40.0-110.0	89.1	88.7	84.7
	Նոր Հաճն	35.0-80.0	52.7	52.1	49.0
	Բյուրեղավան	15.0-50.0	36.8	36.0	32.1
	Եղվարդ	23.0-70.0	45.5	44.5	40.4
	Հրազդան	25.0-65.0	38.4	37.7	34.7
	Ծաղկաձոր	45.0-110.0	84.0	83.7	79.3
	Չարենցավան	25.0-50.0	35.7	35.1	30.9
Շիրակ	Գյումրի	40.0-110.0	86.4	85.2	83.1
	Արթիկ	18.0-55.0	26.8	26.1	23.2
	Մարալիկ	15.0-45.0	23.3	23.1	22.9

Սյունիք	Գորիս	22.0-65.0	30.5	30.2	26.3
	Կապան	25.0-55.0	29.4	28.6	26.4
	Միսիս	18.0-50.0	27.2	26.8	24.2
	Քաջարան	15.0-30.0	17.9	17.4	14.6
Վայոց Ձոր	Վայք	19.0-60.0	35.4	34.7	30.1
	Եղեգնաձոր	20.0-65.0	47.6	46.9	47.3
	Ջերմուկ	25.0-60.0	41.4	40.6	37.5
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	38.2	37.9	35.5
	Իջևան	30.0-70.0	39.9	39.5	38.6
	Բերդ	20.0-50.0	30.0	29.7	25.4

2003թ. առաջին եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, առանձնատների 1քմ շինության շուկայական միջին գները, 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել են 1.5%-ով, իսկ 2002թ. առաջին եռամսյակի համեմատ 8.3%-ով:

2003թ. առաջին եռամսյակում հանրապետությունում, արձանագրվել են հողերի 1540 օտարման գործարքներ /711.75 հա ընդհանուր մակերեսով, այդ թվում, Երևան քաղաքում՝ 38.39հա/: Հողերի 831 օտարման գործարքներն /624.09 հա ընդհանուր մակերեսով/ արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ: Հողերի նկատմամբ իրականացված օտարման գործարքներից 1447-ը հանդիսացել են առուվաճառքի և 91-ը՝ նվիրատվության և 2-ը՝ փոխանակման գործարքներ: Հողերի առուվաճառքի 175 գործարքներում /12.1%/, որպես գնորդներ հանդես են եկել իրավաբանական անձիք:

2003թ. առաջին եռամսյակում, 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքների քանակն աճել է 2.0 անգամ, իսկ 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 21.4%-ով: 2003թ. առաջին եռամսյակում պետական սեփականություն հանդիսացող հողերի 374 առուվաճառքներից 258-ը իրականացվել են աճուրդների միջոցով, այդ թվում 35-ը՝ /4.40 հա/ Երևանում, իսկ 223-ը՝ /54.54 հա/ մյուս մարզերում: Աճուրդային կարգով վաճառված հողերից 62 միավորը /37.14 հա/ հանդիսացել է գյուղատնտեսական, 185-ը /15.53 հա/ տնամերձ և 11-ը /6.27 հա/ հասարակական կառուցապատման:

2003թ. առաջին եռամսյակում հանրապետության մարզերում գրանցված հողերի օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

Ստորև ներկայացվում է 2003թ. առաջին եռամսյակում մարզերում հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանակության հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողեր		Բնակավայրերի հողեր			
			Բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողեր		հասարակական կառուցապատման հողեր				Բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողեր		հասարակական կառուցապատման հողեր	
	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	61	4.94	80	19.10	0	0.00	85	5.64	24	6.78
Արագածոտն	53	11.83	0	0.00	0	0.00	47	67.06	18	2.40	0	0.00

Արարատ	7	15.23	4	0.4	2	0.06	234	72.54	56	5.01	0	0.00
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	94	68.18	35	3.78	1	0.12
Գեղարքունիք	1	10.00	0	0.00	2	3.30	153	203.50	23	2.61	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	36	33.74	10	1.85	0	0.00
Կոտայք	1	0.08	156	13.80	0	0.00	71	22.92	60	6.86	0	0.00
Շիրակ	0	0.00	0	0.00	0	0.00	83	78.78	10	0.58	1	0.04
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	7	2.86	1	0.10	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	11	28.01	4	0.38	0	0.00
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.24	3	0.22	0	0.00
Ընդամենը	62	37.14	221	19.14	84	22.46	737	577.83	305	29.43	26	6.94

2003թ. առաջին եռամսյակում հանրապետությունում վաճառվել են արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 3 միավոր /0.46 հա/ Գեղարքունիքի մարզում և 5 միավոր /1.44 հա/ Երևանում: 2003թ մարտին Երևանում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 4 գործարքներ:

2003թ. առաջին եռամսյակում, հանրապետությունում, բացառությամբ Երևանը, գրանցվել են մասնավոր սեփականության հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի 737 առուվաճառքի գործարքներ, որից 2 դատավճռով վաճառք, որոնց պայմանագրային միջին գները վերլուծությունների արդյունքները 1հա մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի անվանումը /նախկին շրջան/	Պետական սեփականություն հանդիսաող գյուղ.նշ. հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսաող գյուղ.նշ. հողերի առուվաճառքների				
	Քանակը /հատ/	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը /հատ/	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	53	11.83	636.0	1960.0	1348.0	27	10.73	1028.0	7300.0	2300.0
Ապարան						11	6.87	130.0	500.0	300.0
Թալին						7	40.96	200.0	1680.0	340.0
Ծաղկահովիտ						2	8.50	245.0	330.0	290.0
Արարատի մարզ										
Մասիս						32	7.46	730.0	3000.0	1000.0
Վեդի						90	36.66	710.0	7150.0	1100.0
Արտաշատ	7	15.23	133.0	1180.0	338.0	112	28.43	1040.0	6000.0	2000.0
Արմավիրի մարզ										
Վաղարշապատ						46	23.48	980.0	9200.0	2100.0
Արմավիր						27	12.73	670.0	4600.0	1250.0
Բաղրամյան						19	30.71	130.0	1000.0	375.0
Գեղարքունիքի մարզ										
Վարդենիս						152	203.20	90.0	1180.0	230.0
Գավառ	1	10.0	297.0	297.0	297.0			420.0	1100.0	600.0
Մարտունի						1	0.30	100.0	4000.0	475.0
Լոռու մարզ										
Գուգարք						3	1.18	500.0	6000.0	1020.0
Ստեփանավան						7	6.50	180.0	4000.0	320.0
Ալավերդի						7	7.73	380.0	5480.0	720.0
Տաշիր						19	18.33	50.0	400.0	230.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	1	0.08	1146.0	1146.0	1146.0	39	10.96	520.0	10000.0	3480.0

Եղվարդ						22	7.35	660.0	6000.0	1900.0
Հրազդան						10	4.61	250.0	900.0	680.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						78	70.56	550.0	750.0	650.0
Ամասիա						3	5.59	80.0	250.0	210.0
Արթիկ						1	1.48	140.0	2300.0	620.0
Անի						1	1.16	250.0	310.0	260.0
Սյունիքի մարզ										
Սիսիան						7	2.86	90.0	1400.0	220.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						5	8.01	370.0	3700.0	800.0
Վայք						6	20.0	120.0	3400.0	380.0
Տավուշի մարզ										
Իջևան						1	0.24	530.0	4000.0	1100.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծ լինելը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2003թ. առաջին եռամսյակում հանրապետությունում, բացառությամբ Երևանը, գրանցվել են բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի 380 առուվաճառքների գործարքներ, որոնց վերլուծության արդյունքում պարզվել է.

Տարածաշրջանի (նախկին շրջանի) անվանումը	Պետական սեփականություն հանդիսատղ բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսատղ բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի առուվաճառքների				
	Քանակը /հատ/	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը /հատ/	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						15	17340.0	120.0	3800.0	2290.0
Ապարան						3	6640.0	120.0	670.0	310.0
Թալին								78.0	440.0	125.0
Ծաղկահովիտ								78.0	180.0	140.0
Արարատի մարզ										
Մասիս						26	19650.0	280.0	3680.0	840.0
Վեդի						12	11874.0	120.0	1000.0	500.0
Արտաշատ	4	4000	180.0	231.0	205.0	18	18540.0	180.0	2460.0	655.0
Արմավիրի մարզ										
Վաղարշապատ						24	25593.0	280.0	3700.0	1310.0
Արմավիր						11	12220.0	180.0	2440.0	700.0
Բաղրամյան								120.0	280.0	200.0
Գեղարքունիքի մարզ										
Մարտունի						6	7180.0	120.0	320.0	220.0
Գավառ						14	15340.0	180.0	1000.0	520.0
Սևան								120.0	280.0	210.0
Վարդենիս								78.0	180.0	120.0
Ճամբարակ						3	3600.0	78.0	180.0	140.0
Լոռու մարզ										
Ստեփանավան						1	800.0	78.0	340.0	140.0
Գուգարք						8	12716.0	78.0	3800.0	580.0
Սպիտակ								120.0	450.0	160.0

Ալավերդի						1	5000.0	78.0	440.0	200.0
Տաշիր								78.0	180.0	130.0
Կոտայքի մարզ										
Արովյան	37	31425	95.0	161.0	113.0	36	43371.0	180.0	4300.0	1560.0
Եղվարդ	115	101800	67.0	296.0	204.0	16	17150.0	180.0	2670.0	2050.0
Հրազդան	4	4800	109.0	111.0	110.0	8	8070.0	180.0	4120.0	1330.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						10	5790.0	120.0	2500.0	450.0
Անի								120.0	430.0	190.0
Արթիկ								120.0	440.0	190.0
Աշոցք								78.0	120.0	110.0
Ամասիա								78.0	180.0	130.0
Սյունիքի մարզ										
Միսիան						1	1000.0	78.0	450.0	230.0
Գորիս								78.0	670.0	380.0
Կապան								78.0	1000.0	380.0
Մեղրի								78.0	450.0	230.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						3	3265.0	78.0	990.0	290.0
Վայք						1	500.0	78.0	1000.0	210.0
Տավուշի մարզ										
Իջևան						3	2190.0	78.0	1600.0	380.0
Նոյեմբերյան								78.0	670.0	210.0
Բերդ								78.0	670.0	170.0

Պետք է նշել, որ հանրապետությունում 2003թ. առաջին եռամսյակում գրանցվել են նաև պետական սեփականություն հանդիսացող 15, որից 8 գյուղատնտեսական նշանակության հողերի անհատույց տրամադրման գործարքներ: 2003թ. առաջին եռամսյակում հողերի /0.30 հա բնակելի կառուցապատման, 4.29 հա գյուղատնտեսական նշանակության/ անհատույց սեփականաշնորհման 6 գործարքներ են գրանցվել Երևանում /0.24 հա/, 5-ը՝ Արարատի /1.26 հա/, 1-ական՝ Արմավիրի /1.00 հա/, Գեղարքունիքի /0.87 հա/, Շիրակի /1.16 հա/ և Տավուշի /0.06 հա/ մարզերում:

2003թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1119 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.6%-ը: Ընդ որում վարձակալության գործարքների 35.7%-ը իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2002թ. առաջին եռամսյակի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 18.3%-ով, իսկ 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 42.2%-ով: 2003թ. առաջին եռամսյակում հանրապետության մարզերում վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2003թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 71 բնակարանների, 30 բնակելի տների, 240 հասարակական, 28 արտադրական նշանակության օբյեկտների, 3 ավտոտնակի և 747 հողերի վարձակալության գործարքներ:

2003թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 238 վարձակալության գործարքների քանակները, 2002թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 59.7%-ով, իսկ 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 8.8%-ով:

Ընդհանուր առմամբ, 2003թ. առաջին եռամսյակում հանրապետությունում վարձակալվել են 5986.86 հա ընդհանուր մակերեսով հողեր /166.99 հա Երևանում/: Մյուս մարզերում վարձակալված հողերից 5741.24 հա կազմում են գյուղատնտեսական /որից 330.00 հա նախկին պահուստային/, 66.51 հա բնակավայրային, 12.13 հա արտադրական նշանակության օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արարատի մարզում՝ 2149.19 հա , որից 2141.62 հա գյուղատնտեսական նշանակության հողեր: Իսկ առավել փոքր մակերեսով հողեր վարձակալվել են Արմավիրի մարզում՝ 7.54 հա, որից 7.37 հա գյուղատնտեսական, 0.17 հա բնակավայրերի հողեր են: Համայնքների սահմաններից դուրս վարձակալվել են 2981.00 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2003թ. առաջին եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	4	257.00	45	251.98
Արարատ	11	1927.00	33	214.62
Արմավիր	0	0.00	4	7.54
Գեղարքունիք	12	797.00	103	1289.24
Լոռի	0	0.00	32	111.87
Կոտայք	0	0.00	82	363.05
Շիրակ	0	0.00	28	288.08
Մյունիք	0	0.00	13	83.46
Վայոց Ձոր	0	0.00	19	141.58
Տավուշ	0	0.00	2	9.00
Ընդամենը	27	2981.00	361	2760.42

2003թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 843 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.5%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 24.7%-ով, իսկ 2002թ. առաջին եռամսյակի համեմատ աճել 38.9%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 41.0%-ը իրականացվել են իրավաբանական անձանց կողմից, իսկ գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /35.0%/, հասարակական նշանակության օբյեկտների /19.8%/, առանձնատների /13.5%/ և հողերի /26.6%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 417 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2002թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 50.5%-ով, իսկ 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 21.6%-ով:

Ընդհանուր առմամբ, 2003թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 133.98 հա մակերեսով հողեր /0.35 հա Երևանում/, որից 133.41 հա

գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արարատի մարզում՝ 74.83 հա գյուղատնտեսական նշանակության:

2003թ. առաջին եռամսյակում, հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների մասնավորեցման /ապապետականացման միջոցով/ համապատասխանաբար, 65 և 20 գործարքներ, որոնց ընդհանուր քանակը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.7%: 2003թ. առաջին եռամսյակում հանրապետության մարզերում մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 39.3%-ով, իսկ 2002թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 19.0%-ով: 2003թ. առաջին եռամսյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 18.8%:

2003թ. առաջին եռամսյակում, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի առաջնային գրանցումների 1759 գործարքներ, որոնց քանակը 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է՝ 58.6%-ով, իսկ 2002թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 15.3%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 13.6%: Քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /38.4%/: Ընդ որում առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն